

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐՏԱՅԱՅՏՁԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Յիշատակեցից նուագս ի յոգունց,

Իբր յանբաւ բազմութեանց ծովու կաթիլ մի առեալ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Ա. Կրկնութեան տեսակների արտայայտչականությունը

Նարեկացու բանաստեղծական պատկերների ներգործումն ուժն անբաժանելի է արտայայտչական միջոցների կիրառման վարպետությունից: Լեզուն ընդհանուր է գրողների համար, ոճը՝ անհատական: Ոճի առանձնայատկությունը դրսևորում է ոչ միայն հեղինակի գեղարուեստական մտածողութեան իւրայատկութեան, այլև նրա խօսքի շարահիւսական առանձնայատկությունների մէջ: Արտայայտչական միջոցները եւս նոյնն են, տարբեր են դրանցից օգտուելու հեղինակային նախասիրությունները: Միջին դարերում ֆարտասանական կրթութեան ձեռնարկներում լայն տեղ էր տրւում արտայայտչական միջոցների ուսուցմանը:

Կրկնությունը պատկանում է խօսքի արուեստի հին ու յայտնի արտայայտմիջոցների թուին: Կրկնութեան հիմնական տեսակները երեքն են՝ ա) յարակրկնություն (անաֆոր), բ) վերջոյթ (էպիֆոր) եւ գ) դարձ կամ կրկնակ (ռեֆրեն): Նարեկացու ստեղծագործությունը առատ է բառական կրկնությունների բազմաձեւութեամբ: Այստեղ եւս նա շարունակում է թէ՛ հայոց հին բանաստեղծութեան աւանդությունները, շարականների արուեստի առանձին յատկանիշների եւ թէ՛

համարձակօրէն դիմում է ժողովրդական ստեղծագործութեանը՝ երգարուեստին եւ խօսարուեստին՝ ստեղծելով արտայայտմիջոցների կիրառման գոտս Նարեկացիական ոճը:

Համեմատաբար հարուստ չեն կրկնակները կամ դարձերը: Կրկնակը յատուկ է երգին: Հայոց հոգեւոր երգը առանձնակի ֆնարականութիւն էր հաղորդում խօսքին դարձերի երաժշտականութեան եւ համաչափ կրկնութեան շնորհիւ: Արեղեանը գտնում է, որ մեծ մասամբ դարձից է կախուած «շարականների բնորոշ ոգին եւ ֆնարականութիւնը»(1):

Կրկնակները Նարեկացին օգտագործել է առաւելապէս գանձերում եւ «Սայլն այն իջանէր ի լեռնէն ի Մասեաց» սկզբնատողով տաղում: Այստեղ կրկնակը հանդէս է գալիս իմաստային եւ գեղարուեստական գործառոյթի մեծ բեռով: Սայլն իջնում է Մասիս սարից՝ շփել ու տօնական, եւ յանկարծ կանգ է առնում, անիւներն ասես գամւում են մամրին, եւ տաղի կրկնակը տխուր, սրտաբեկ հնչեւանգով շեշտում է դադարի այդ պահը:

Եւ ահա շարժէր սայլիկն այն,

Եւ ահա չխաղայր անիւն այն:

(ԳՆՏԳ, 61)

Յաջորդ տների մէջ խորանում է ցաւի ու զարմանքի այդ զգացումը, տխրութիւնը մի տեսակ դառնում է համատարած, բայց ահա ձայն է տալիս նորտ սայլապանը, սայլը շարժւում է տեղից, եւ կրկնակն էլ հնչում է զուարթ ու թեթեւ.

Եւ ահա շարժէր սայլիկն այն,

Եւ ահա խաղայր անիւն այն:

Քնարական տրամադրութեան շրջադարձը, որը բխում է տաղի գաղափարից, Նարեկացին տուել է կրկնակների միջոցով: Շարժման, դադարի եւ վերստին շարժման պատկերի մէջ Նարեկացին այլաբանօրէն տուել է Քրիստոսի յարութեան խորհուրդը՝ կրկնակներն օժտելով համապատասխան հնչերանգով:

Գանձերի կրկնակները հիմնականում ունեն անհրաժեշտ տարր կազմող «աղաչեմք», «հայցեմք», «ողորմեա» եւ նման արտայայտութիւնները, որոնք քաղցի խօսքին յաւելում էին ունկնդիրները՝ քարեխօսութեան ակնկալութեամբ: Գանձերի կրկնակները եւս հետամտում են նոյն նպատակը, միայն թէ այստեղ կրկնակը բխում է գանձի նիւթից, ունի իր ձայնեղանակը, իր կառուցուածքն ու տաղաչափութիւնը: Օրինակ՝

Ահա ընկալցիս գաղերս աղաւթից՝
յարմարեալ խնկաւք

Յայս յարկ-նուիրեալ, սո՛ւրբ եկեղեցի,
աղաչեմք:

(ԳՆՏԳ, 163)

Կրկնութեան ձեւերից մէկն էլ տողասկզբի քառի կրկնութիւնն է, որի առաջին կիրառողը, ըստ իս, եղել է Նարեկացին: Ահա՝

Հաւո՛ւն, հաւո՛ւն արթնացեալ,

դիտելով զհեթանոսս,

Ձայնէ՛ր, ձայնէ՛ր տատրակին,
սիրասնունդ սիրելոյն ...

(ԳՆՏԳ, 115)

Կրկնութեան այս տեսակի տարբերակ կարելի է համարել «Սէր յառաւատէ» սկզբնատողով մեղեդին: Մեղեդին ունի եռատող տներ, կանոնաւոր տաղաչափութիւն: Իւրաքանչիւր առաջին տողն անփոփոխ կրկնւում է երկրորդ տողի մէջ, այսպէս՝

Վարսս մանր անձրեւով,

Վարսս մանր անձրեւով լցեալ,

Յեռմամբ մարգարտով:

(ԳՆՏԳ, 100)

Միջնադարի տարածուած կրկնութիւններից մէկն էլ «պատասխանի» կոչուած ձեւն էր: Տողավերջի քառը կրկնւում է յաջորդ տողի սկզբին կամ տնավերջի քառը դառնում է յաջորդ տնասկզբի քառ: Բառը կարող է կրկնուել անփոփոխ, փոփոխուած՝ խոնարհուած կամ հոլովուած, քարդուած կամ ածանցուած: Բառի նման կրկնութիւնը ընդգծում է իմաստը, դաշնութեան հնչերանգ է հաղորդում կշռոյթին: Դա նպաստել է նաեւ քանաստեղծութեան ամբողջութեան պահպանմանը ձեռագրերում: Ղազարի յարութեանը նուիրուած տաղերից մի ֆանիսը գրուած են այդ ձեւով.

Սկզբնազարդ գոյիւ անայր երբեմն ի
նոյն վայրին,

Վայր նոխ նեմէին տաւիղ, ամէն
բերելոյ աւրիաս.

Աւրիաս վաղաւէտ վնիռ, սէր
համբերապատ մահին

Մահինաբողբոջ ժամին, ժամին
ժամանեալ աւուր:

(ԳՆՏԳ, 83)

Տների շղթայայար եղանակը Նարեկացին կիրառել է Քրիստոսի Համբարձմանը նուիրուած տաղերից մէկում: Տաղի եռատող տների վերջին

բառը կանոնաւորապէս անցնում է յաջորդ տուն՝ դառնալով տնասկիզբ.

էն՝ ի միշտ էն անեղապէս ծնունդ.

Ծածկեալն յաննին ծոցոյ

Ծագեալ ի Հաւրէ լուսոյ՝ աշխարհի լոյս:

Լոյսն զիրական ստեղծեալն տիպ

Պատկեր տպաւորեալ լուսոյն,

Ծածկոյթ հողանիւթ արփիական կերպին:

Կերպարանն Հաւր առեալ զմերս,

Ծնեալն տնաւրինաբար մարմնով,

Խաչիւ եւ արեամբ ազատելով գրնութիւնս

(ԳՆՏԳ, 103)

Նարեկացին կրկնել է նաեւ բանաստեղծութեան տների առաջին բառը՝ զուգորդելով հարցման, բացականչութեան, դիմումի կամ այլ ձեւերի հետ, որը գեղեցկացնելով կշռոյթը, հանդիսաւորութիւն է հաղորդում բանաստեղծութեանը.

Աւետի՛ս, մեծ խորհրդոյ խորհուրդ ծածկեալ մեզ յայտնեցաւ,

Աւետի՛ս, լոյս Հաւր ծագեալ ի ծոցածին յէութենէ.

Աւետի՛ս, յայտնեալ աստուած ի հողեղէն գոյացութիւնս ...

(ԳՆՏԳ, 66)

Նարեկացին չափազանց սուր է զգացել գեղեցիկ կրկնութեան գրաւիչ ուժը եւ աւելորդ կրկնութեան տհաճ ներգործութիւնը: Նա ձգտել է չըկրկնել նոյնիսկ կրկնութեան ձեւերը, իսկ մտքի կրկնութիւնը համարելով շատախօսութիւն՝ դասել է ծանր մեղքերի շարքը:

Առաջին հայացքից Նարեկացու յարակրկնութիւնները կարող են թուալ միօրինակ: Մինչդեռ իրականում դրանք այնքան բազմաձեւ են, որ ուղղակի ապշեցնում են ոճական հնարների իրենց նրբերանգներով:

Եւ շաղկապի կրկնութիւնը սովորական է գրաբարի համար: Այդ ճաշակը սերում է Աստուածաշնչից: Նարեկացին, սակայն, ինչպէս ճիշտ նկատել է լեզուաբան Վ. Առաքեանը, ստեղծել է «կապակցման այնպիսի բազմազանութիւններ, յուզարտայայտչական նրբերանգների այնպիսի ցայտուն դրսեւորումներ, որոնք մինչեւ այդ գոյութիւն չունէին, եւ յետագայում էլ մեր հին գրական լեզուն չկարողացաւ մարսել եւ ընդհանրացնել դրանք»(2): Եւ շաղկապի յարակրկնութեամբ Նարեկացին ամէնից առաջ խօսքին հաղորդում է վիպական-պատմողական լայն շունչ ու խաղաղ հանդիսաւորութիւն, ոտանաւորին տալիս է համաչափ կշռոյթ, տողը յստակ բաժանում է տողից, միտքը՝ մտքից: Ահա, օրինակ.

Եւ արդ, առողջքն անդամաւ
անկարաւտք եմ թշկութեան,

Եւ տեսանողականքն աչաւ չունին
պէտս առաջնորդի,

Եւ փաթեմքն ընչիւք ոչ դեգերին
առ դուրս լիցն,

Եւ ամենայնիւ յոփացեալքն ոչ սպասեն
փշրանաց սեղանոյ հացի,

Եւ սուրբքն վարուք ապենիազ են
ողորմութեան:

(Բան ԾԹ, ք)

Այսպիսի կշռոյթաւոր համաչափութեամբ են գրուած Մատեանի մի շարք գլուխների ծաւալուն հատուածներ (Բան ԻԳ, ք, ԼԲ, դ, ԾԱ, դ, ՀԹ, գ, ԶԸ, ք): Նոր հնչերանգ հաղորդելու համար Նարեկացին փոխում է շաղկապի դիրքը, եւ-ը միաւորում է երկու համաչափ կառուցուած նախադասութիւններ, եւ այս անգամ արդէն գոյգ նախադասութիւնները իրար նկատմամբ դառնում են համագօր, բայց շղթայար.

Ոչ ի կապելն զքեզ դիմադարձեցեր

Եւ ոչ յապտակելն դժուարեցար,

Ոչ ի թճնուլն թշնամանեցեր

Եւ ոչ ընդ կոփելն երբեք խռովեցար,
Ոչ ընդ կատակելն սրտմտեցար
Եւ ոչ ընդ խաղ արկանելն երեսս
փոխեցեր:

(Բան Հէ, ք)

Եւ շաղկապի արտայայտչականութիւնն առաւել յստակ է երեւում հարցական, հրամայական, եւ ժխտական նախադասութիւնների կառուցումներում: Հարցական նախադասութեան մէջ ընդհանրապէս կայ սպասողական լարուածութիւն: Հարցը, իսկ հարցերի շարքը առաւել եւս, ընդգծում է դրամատիկ պահը: Հարցը, եթէ ճարտասանական ձեւ չէ, ենթադրում է պատասխան: Դա մի տեսակ տեւական է դարձնում ներքին սպասողականութիւնը:

Շաղկապի յարակրկնութիւնը այդ լարուածութիւնը հաղորդում է հարցերի ողջ շարքին:

Եւ գիւրդ ասացից անձին իմում
մարդ՝ գրեալս ընդ անմարդիս,

Եւ ի՞րր անուանցայց բանական՝
յանբանիցն յիմարութեան կցորդեալս,

Եւ ո՞րպէս կոչեցայց տեսանողական՝
մթուցեալ զլոյսս, որ յիս

Եւ ընդէ՞ր համբաւեցայց զգայական՝
գիմաստիցս դրունս փակեալս:

(Բան ԻԱ, դ)

Մատենում քաղմաթիւ հատուածներ գրուած են մի՛ արգելական հրամայականի յարակրկնութեամբ: Այստեղ եւս Նարեկացին ձգտել է ստեղծել քաղմագանութիւն: Մի՛ արգելականի ու եւ շաղկապի գուգորդութեամբ նա ռիթմը դարձնում է կտրուկ, տագնապը՝ ակներեւ, խնդրանք՝ հրամայածեւ, յորդորը շեշտուած: Ահա՛

Մի՛ պահեսցի ինձ սառն մեղացս

Եւ մի՛ հոսամք ուղիսից կենցաղոյս
զիս ողորդեսցեն:

Մի՛ հանգիստն մահ բերիցէ,

Եւ մի՛ ննջումն ի սատակումն

յառաջեսցէ:

Մի՛ բունն ինձ կորուստ լիցի,

Եւ մի՛ նիհիումն ապականութիւն
գործեսցէ:

(Բան ԶԲ, գ)

Եւ շաղկապը Նարեկացին վարպետօրէն կիրառել է նաեւ հակադրութիւնների մէջ: Այս դէպքում նա շաղկապն օգտագործում է եւ ոչ էլ, քայց, իսկ եւ նման իմաստներով: Այսպէս են գրուած Մատենի շատ հատուածներ (Բան Բ, գ, ԺԸ, ա, ԻԸ, ք, ԻԹ, գ, ԽԹ, ա, ԾԴ, դ, ԿԲ, ա, ՀԱ, ք եւ այլն): Օրինակ՝

Զմաղթեցի՝ եւ դու արարեր,

Զեւ եւս եկեալ ի լոյս՝ եւ տեսեր,

Ոչ յայտնեցեալ իմ՝ եւ գթացար,

Ոչ կարդացեալ՝ եւ խնամարկեցեր

Ոչ համբարձեալ ձեռն՝ եւ նայեցար,

Ոչ պաղատեալ՝ եւ ողորմեցար,

Ոչ կերպացեալ ձայնիս՝ եւ լուար,

Ոչ հեծեծեալ՝ եւ ունկնդրեցեր:

(Բան ԺԸ, ա)

Կարելի է քաղմապատկել կրկնութիւնների շարքը: Բայց ինձ աւելի ճիշտ է թւում Վ. Առաքելեանի խօսքերով կրկին հաւաստել, որ «Նարեկացին եւ-ը կիրառել է մեծ արուեստագէտի հմտութեամբ»(3):

Կասկածն ու տարակոյսը անբաժան են Մատենի քնարական հերոսի յուզաշխարհից: Փրկութեան յոյսի հեռանկարը նրան միշտ թւում է անորոշ, տարակուսելի, թէական: Եւ որովհետեւ փրկութեան այդ յոյսը նա ակնկալում է միայն Աստծուց, ուստի նրան ներկան միշտ պայմանաւորուած է ըզձական ժամանակով: Մի դրութիւն ստեղծում է փոխադարձ մի այլ կապ, մի ելք ենթադրում է ուրիշ մէկ այլ ուղի, եւ ապրումների այդ քարդութիւնը, զգացմունքների եւ յոյզերի այդ հակասականութիւնը Նարեկացին տալիս է ոչ այլ կերպ, քան քէ-երի եւ եքէ-ների շարահիւսական հնարաւոր բոլոր

զուգորդութիւններով: Այնքան ընտանի,
հարազատ ու հայերէն են ոճական այդ
կիրառութիւնները, որ Նարեկացու խօսքը
հնչում է անանց թարմութեամբ, տարերային
եւ ինքնաբերական, մտերմիկ ու անմիջական:
Այսպէս՝

Եթէ ի կամաց մերոց ոչ դառնամք՝
դու դարձուցանես,

Եթէ մեղանչեմք՝ ողբաս,

Եթէ արդարանամք՝ ժպտիս,

Եթէ աւտարանամք՝ սգաս,

Եթէ մերձենամք՝ տաւնես ...

(Բան ԾԱ, ք)

Խօսքին աւելի արագ թափ հաղորդելու
նպատակով Նարեկացին կարող է գեղջել
ենթական («Եթէ պատկերայն արքունիցես՝
աղբիւր ես, եթէ զծածկեալսն երեւեցուցես՝
լոյս ես» - Բան ՀԶ, ք), եթէ-ի փոխարէն
օգտագործել թէ («Թէ գկենդանութիւն
շարժմանս քարձցես, թէ գրանիս
գաւրութիւն ունայնացուցես» - Բան ԺԹ,
ք) եւ, ընդհակառակը, դրամատիկ
մթնոլորտը խտացնելու համար՝ ստեղծել
ծաւալուն պարբերոյթներ, պայմանական
նախադասութիւնները միահիւսել
հարցական նախադասութիւնների հետ եւ
այլն: Բերեմ մէկ օրինակ՝

Եւ արդ, առ երկրածի՞ն ոք
պաղատեցայ

Այրս մահացու ամենապատիր,

Եթէ ընդունայն է աղաղակելն,

Առ մահկանացու՞ բանական,

Եթէ սուտ իցէ փրկութիւնն
առ յուսոյն վստահութիւն,

Առ մա՞րդ ոք եղծական,

Եթէ ընդ տկարութեան բանին՝ եւ
նանիր է գաւրութիւնն,

Առ իշխա՞նս երկրաւոր գահից,

Եթէ անցաւոր է ընդ ինքեանս եւ
իւրեանցն բարութիւն,

Առ եղբա՞յր ոք հարազատ,

Եթէ կարաւոր է կամելոյն առ անձինն
անդորրութիւն,

Առ հա՞յրն իմ երկրաւոր,

Եթէ պակասեալ են խնամականքն
ընդ աւուրց նուագութեանն,

Առ մա՞յրն իմ, որ երկնեաց,

Եթէ կասեցան գթութիւնքն ընդ
նահանջել կենդանութեանն,

Առ թագաւորութիւնս աշխարհի
արդեաւք,

Որք գմահացուցանելն միշտ
արուեստաւորէն, քան գկենագործելն,-

Այլ առ քեզ, քարերար աստուած,
աւրինեալ ի բարձունս:

(Բան ԾԱ, ա)

Ակներեւ է խօսքի քնականութիւնը,
զգացմունքի լարուածութիւնը, քնարական
անմիջականութիւնը: Անմիջապէս նկատելի
է առ նախդիրի յարակրկնութիւնը՝ տեղին,
նկուն եւ անբռնագրօս: Կրկնութիւնների
այս զուգահեռ ձեւերը խիստ յարիր են
Նարեկացու ոճին: Նա շոյալօրէն դիմել է
նաեւ կամ, գի, քայց, որ, քան, գի, յորժամ,
այլ, իսկ, եւ այլ շաղկապների եւ առ, ի,
մինչ, ընդ, ըստ, եւ այլ նախդիրների
գործածութեանը՝ ստեղծելով հնարաւոր
կիրառութիւնների գեղեցիկ յարակրկնու-
թիւններ:

Նարեկացին նրբաճաշակ եւ հարուստ
յարակրկնութիւններ է ստեղծել նաեւ
դիմելով դերանունների շարահիւսական
կիրառութեան քաղաքական ձեւերի: Ամենից
առաջ դա վերաբերում է անձնական
դերանունների բոլոր դէմքերին: Առաջին
դէմքով՝

Ե՛ս վրիպեցայ, ե՛ս աւտարացայ,

Ե՛ս յիմարացայ, պարտեցայ եւ խոտան
գտայ,

Ե՛ս լճայ, կասեցայ եւ կործանեցայ,

Ե՛ս մոլորեցայ, ե՛ս մատնեցայ, ե՛ս
մերժեցայ,

Ե՛ս խորթացայ, գերեցայ եւ
գայթակղեցայ,

Ե՛ս նզովեցայ, ե՛ս թշուառացայ,
արքեցայ եւ վաւթարացայ,

Ե՛ս ընկուզայ, ե՛ս խաբեցայ, ե՛ս
անաւրինեցայ,

Ե՛ս ապականեցայ, մահացայ եւ
խսպառ եղծայ:

(Բան ԿԵ, դ)

Երկրորդ դէմք՝

Դու ես, որ փոխատրես գփաբեղէն
սրտից կարծրութիւն,

Ի լոյծ կակղութեան մարմնոյ
գոյութեան՝ բանի ընդունելութեան,

Դու ես, որ բաւես ընձեռել սիրտ ալ
եւ ճանապարհ մի,

Երկնչել ի քէն գրովանդակ կենացն
սահման,

Դու ես, որ տաս գերկիւղ քո ի միտս
խստութեան՝

Առ քեզ ուշ ունել հաւատովք, ըստ
մարգարէիցն ձայնի:

(Բան ԼԵ, ք)

Երրորդ դէմքով՝

Մինչ հայի հարուածոց գանից,

Նա գթո՛ց գիրկս արկանիցէ,

Մինչ պատրաստեալ յուսայ
կորստեան,

Նա երեւելի՛ տեսողաց քազմաց
առնիցէ,

Մինչ ակն ունի սատակման մահու,

Նա ընդ կենացն եւ փա՛ռս
ընծայեցուցէ,

Մինչ հատման գլխոյն Նայեցի,

Նա զնոյն պսակա՛ւ պայծա-
ռացուցանիցէ:

(Բան ՀԴ, ք)

Ուրիշ օրինակներ չեմ քերում: Ասեմ,
որ յարակրկնութիւնների գեղեցիկ կիրա-
ռութիւններ կան նաեւ ցուցական
դերանուններով: Ցուցական դերանունները
գուգորդելով խօսքի ալ մասի,
հերականական մէկ ալ ձեւի կրկնութեան
հետ Նարեկացին ստեղծել է կուռ,
յղկուած, համաչափ տողեր ու հատ-
ուածներ, որոնք աչքի են ընկնում խօսքի

քնականութեամբ եւ քնարական մտերմիկ
շնչով: Ահա մի յարակրկնութիւն՝ կազմուած
այն ցուցական դերանունով եւ եթէ
շաղկապով.

Այն է քո մեծութիւն,

Յորժամ գյուսահատութեան վերն
առողջացուցես,

Այն է հարազատ քու
ազգակցութեան,

Եթէ յանակնկալն ժամու
արուեստաւորեսցես փրկութիւն,

Այն է հանդիսարան քու յաղթանակի,
Եթէ զփակեալն մուտս կենաց ի
սպառումն շնչոյս բացցես,

Այն են քո շնորհի վայելչականք,
Եթէ զչարեացս իմոց մոռացեալ՝
գրարեացդ քո յիշեցես:

(Բան ՀԴ, ա)

Շարունակութեան մէջ մէկ
յարակրկնութիւնից անցնելով մի ալ
յարակրկնութեան, Նարեկացին վերստին
դիմում է ցուցական դերանուններին,
քազմերանգութեանը նոր երանգ
աւելացնելով այս դերանունով՝ ընդգծելու
համար Աստծու գթասրտութիւնն ու
մարդասիրութիւնը.

Ա՛յս պտուղք արհնութեան, գթած,
սփանչեալքմատ քու շառաւիղաց,

Ա՛յս արգասիք կենաց արարչականդ
քո հրամանաց,

Ա՛յս իղձք խորհրդոց խոստովանեալդ
քո տենչանաց,

Ա՛յս նշոյլք լուսոյ ամենասփիռդ
ճառագայթից,

Ա՛յս ախորժութիւն ճաշակաց
քարերանեալդ քո քաղցրութեան:

(Բան ՀԴ, ք)

Քազմածեւ են մի՛ արգելական
մասնիկով կազմուած յարակրկնութիւն-
ները: Ցուցական երանգը միշտ էլ մնում
է խնդրանք, քայց ոչ երբեք հրամանը:
Նարեկացին Աստծուն կարող է միայն
պաղատել ու աղաչել, փոխելով միայն

խօսքի հնչեքանգը, բայց ոչ ողբերգական էութիւնը: Մի դէպքում նրա խօսքը հնչում է սրտաքեկ քախանձանքով՝ խնայելու իրեն («Մի՛ յաւելուր հեծութեանս ցաւ, Մի՛ խոցեր զվիրաւորեալս» Բան Ժէ, ա), երկրորդ դէպքում նա գթութիւն է հայցում՝ ծերութեան օրերին իրեն չլքելու համար («Մի՛ քողցես զտկարութիւնս, Մի՛ անարգեր զալիսն, Մի՛ կորացուցես ըզկործանեալն» Բան Զէ, գ), երրորդ դէպքում խնդրում է իրեն չզրկել շնորհից («Մի՛ ալլալեսցի յինէն դրոշմդ լուսապահոյն, Մի՛ քարձցի ի տեսանելեացս քբաց նահանջդ աւրհնութեան» Բան Կե, ք), չորրորդ դէպքում աղերսում է հոգու փրկութիւն, որ իր քարձրագոյն իղձն է ու նպատակը («Մի՛ փակեցես դիմելոյս առ քեզ զառագաստ սրահի կենացդ յարկի, Մի՛ տրոհեցես ի քազմականացդ եւ ի քարեացդ քո զրկեցես» Բան ԽԸ, ա) եւ այլն:

Շարահիւսական այս ձեւերի մէջ ուրոյն կառուցուածք ունի ԿԶ գլխի գ հատուածը: Նախ մի՛ արգելականը Նարեկացին դնում է տողի մէջտեղում՝ տողը բաժանելով համաչափ հատածների, այնուհետեւ՝ մի՛ արգելականի եւ նրա ստորոգեալի միջեւ դնում նախադասութեան մէկ այլ անդամ՝ կիսատողի համաչափութիւն ստեղծելու համար եւ, վերջապէս, յանգաւորում է թէ՛ առաջին եւ թէ՛ երկրորդ կիսատողերը:

Մեռեալ պատկերիս մի՛ ոխս պահեսցես,

Ընդ անշունչ կերպարանիս մի՛ ի դատ քննութեան մտցես,

Մահու տանջեցելոյս մի՛ հարուածս յաւելցես,

Ընդ քեկեալ խեցեղէն անաւթոյս մի՛ ուժգնութեամբ մարտիցես,

Վնաս կոշկոճելոյս մի՛ քարկութիւն կրկնեցես,

Կործանեալ շինուածոյս մի՛

պատուհաս մատուցես,

Շանս սպանելոյ մի՛ քարինս արձակեցես,

Լուսոյս ջախջախելոյ մի՛ սաստիկս որոտացես,

Հողիս անպատուելոյ մի՛ իբր ամբարհաւանի ուժգինս մոնչեցես ...

(Բան ԿԶ, գ)

Հատուածի յուզական հնչեքանգն աւելի խոր տպաւորութիւն է թողնում մանաւանդ, երբ ընթերցողի յիշողութեան մէջ յառնում է մինչ այդ ասուած Ի գլխի եւ հատուածի ինքնապարսաւ խոստովանութիւնը: Այնտեղ խոստովանում է՝ Ամբարտաւանեցայ փոշիս շնչաւոր, այստեղ պաղատում՝ Փողիս ցնդելի մի՛ իբր զքո դիմամարտ գտցես: Այնտեղ խոստովանում է՝ Ի վեր ամբարձայ մոխիրս մերժելի, այստեղ աղերսում՝ Զմոխիրս մերժելի մի՛ ի դատ ընտրութեան կոչեցես: Այնտեղ խոստովանում է՝ Բարկութեան քոցով ցուացայ տիղմս քանաւոր, այստեղ աղաչում՝ Զտիղմս տաղտկալի մի՛ իբր գոսոխ վարկանիցես:

Նարեկացին յարակրկնութիւններ է ստեղծել նաեւ ձայնարկութեամբ: Դա կարծես հաստատումն է քանաստեղծի այն մտքի, թէ ինքը շնչաւոր մատեան է՝ ներսից ու դրսից իր մէջ կուտակած «ողբս եւ վայս եւ ձայնս» (Բան ԼԹ, ք): Եւ նա ողբում է իր անձի թշուառութիւնը վայերի մի յարակրկնութեամբ, որը ոչ միայն խիստ համահնչիւն է նրա տագնապին ու տառապանքին, այլեւ գուգորդում է ժողովրդական ողբի հետ.

Վա՛յ ինձ առ արբումն մահուն քաժակին,

Ո՞րպէս գլալիտեանականն տուժեցայց,

Վա՛յ ինձ առ ելս անարժան հոգւոյս յեղկելի մարմնոյս,

Ի՞բր դատաւորին յանդիմանեցայց,

Վա՛յ ինձ առ նուագութիւն իւղոյն լապտերայց,

Ջի անարժարժեղի է աղատանակ,

Վա՛յ ինձ առ ճեպ տագնապի
պակուցման,

Յորժամ առագաստին մուտն
փակեցի:

(Բան է, գ)

Միջնադարի քանաստեղծությունը
հարուստ է վերջոյթներով: Թէեւ
Նարեկացին տուել է նաեւ վերջոյթների
օրինակներ, սակայն դրանք հիմնականում
թուարկումներ են, որոնք մի դէպքում նա
ստեղծել է քո դերանուն կրկնութեամբ
(Առ մահապարտիս դառնութիւն՝
փաղցրութիւն քո, Առ կորուսելոյս
յայտնութիւն՝ ճառագայթ քո» (Բան Լ, Ե),
երկրորդ դէպքում՝ լիք դերանունով
(«Թագաւորն եւ սիրեցեալք իւր, Արքայն
եւ պատւաւորք իւր» Բան ԼԸ, Բ), երրորդ
դէպքում՝ օժանդակ բայի 2րդ եւ 3րդ
դէմքերով («Նքէ փաւսցես՝ կարող ես, եթէ
բժշկես՝ զաւրաւոր ես» Բան ՀԶ, Բ) եւ այլն:

Յարակրկնութեան եւ վերջոյթի
գուգորդման լուագոյն օրինակը, ըստ իս,
տուել է դարձեալ Նարեկացին: «Մեղայ»
բառը կրկնելով թէ տողի սկզբից եւ թէ
վերջից, նա ստեղծել է մի «համաձեւութիւն»,
որը խորապէս ներդաշն է «հոգեկեցոյց
խոնարհութեան» քախանձանքն արտայայ-
տելու քանաստեղծի մտայղացմանը:
Բանաստեղծական արուեստի գոհար է այդ
հատուածը, հաւատացեալի գղջման ու
ապաշաւանքի անգուգական պատկեր:

Մեղա՛յ մեծիդ քարերարութեան,
անարգս մեղայ,

Մեղա՛յ ծագմանդ ճառագայթից,
խաւարս մեղայ,

Մեղա՛յ շնորհացդ անբաւ երախտեաց,
արդարեւ մեղայ,

Մեղա՛յ սիրոյդ վերնում գթութեան,
յայտնապէս մեղայ,

Մեղա՛յ ստացողիդ յոչեութենէ,
ստուգապէս մեղայ,

Մեղա՛յ գերունակ գոգոյդ գրգանաց,
անբաւս մեղայ,

Մեղա՛յ աննուագ լուսոյդ վայելման,
նենգողս մեղայ ...

(Բան Իէ, Բ)

Այսպիսով, Նարեկացու օգտագոր-
ծած ռեաբանական կրկնութիւնները
ծառայում են մի նպատակի՝ մտքի
քարձարուեստ դրսեւորմանը: Այդ
կրկնութիւնները քաղմագան են իրենց
շարահիւսական համանիշներով եւ
քաղմեքանգ՝ իրենց արտայայտչակա-
նութեամբ: Նարեկացին երբեք նոյնութեամբ
չի կրկնում իր կիրառած կրկնութեան
տեսակը: Միմեանց նկատմամբ
յարաքերականօրէն նման կրկնութիւններից
մէկը միւսից միշտ տարբերում է որեւէ
յատկանիշով՝ կշռոյթով, ազատ ոտանաւորի
անդամների թուով, նախդիրների կիրա-
ռութեամբ, տաղաչափութեամբ, յանգով
եւ անյանգութեամբ, ենթակայի եւ
ստորոգեալի տեղով եւ այլն: Բոլոր
դէպքերում Նարեկացին հաւատարիմ է
մնում իր ապրումներին համապատասխան
արտայայտչական հնարներ գտնելու
գեղագիտական սկզբունքին: Նա ձգտում
է առաւել փնտրականութիւն հաղորդել
խօսքին, յարուցել յուզական կենդանի
այնպիսի թրթիւներ, որոնք շեշտում են
անհատականութեան սկիզբը քանաստեղ-
ծութեան մէջ: Կրկնութիւնների իր
քաղմածեւ կիրառութիւններով եւս
Նարեկացին քարերար ազդեցութիւն է
թողել յետնորդների վրայ:

ԱՂԲԻԻՐՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1.- Մ. Արեղեան, Կ. Գ, էջ 543:
- 2.- Վ. Առաքելեան, նշվ. աշխ., էջ 109:
- 3.- Նոյն տեղում, էջ 115:

Ա. ՂԱԶԻՆԵԱՆ

(շարունակելի)